Գագիկ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ («Խայթ» պատմվածքը)

1898թ. Ա. Ահարոնյանը բարձրագույն կրթություն ստանալու նպատակով գնում է Ցվեյցարիա և ընդունվում Լոզանի համալսարանի պատմափիլիսոփայության բաժինը: Ուսումնառության տարիներին գրողի ստեղծագործական հետաքրքրությունների կիզակետում է շարունակում մնալ արևմտահայության կյանքի ու ոգորումների թեման, սակայն փոխվում են այն արծարծելու գաղափարաքաղաքական ու փիլիսոփայական ելակետերը: Ահարոնյանը, դառնալով Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամ, սերտ կապեր է հաստատում նրա ճանաչված առաջնորդ Ք. Միքայելյանի հետ: Վերջինիս անմիջական խրախուսմամբ էլ սկսում է իր գեղարվեստական ստեղծագործություններում պատկերել Արևմտյան Հայաստանում (1890-1900-ական թթ.) հայդուկ-ֆիդայիների մղած պարտիզանական բնույթի կռիվները, որ մղվում էին թուրքական իշխանությունների վարած հայատյաց քաղաքականությունն իրականացնողների դեմ: Մի շարք բանավոր ու հատկապես գրավոր վավերական նյութերի հիման վրա, որոնք նրան էր տրամադրում այդ ժամանակ «Դրոշակ»-ի խմբագիր Ք. Միքայելյանը, Ահարոնյանը գրում է պատմվածաշար: Այդ ստեղծագործությունները «Ազատության ճանապարհին» խորագրի տակ 1898թ. լույս են տեսնում «Դրոշակ»-ի էջերում:

Այս պատմաշրջանում առաջին պլան էր մղվել 1894-96թթ. ինքնապաշտպանական մարտերի ձախողման ու մասսայական կոտորածների հետևանքով ընկճված ժողովրդին զոտեպնդելու խնդիրը: Եվ ահա գրողը ձեռնամուխ է լինում գրականացնելու իրեն հասած վավերական պատմությունները: Իրական կենսանյութը և նրա գեղարվեստական արտացոլումը ուրույն համադրությամբ են դրսևորվել գրողի ստեղծագործական երևակայության փոխակերպումների մեջ: Ուստի՝ «Ազատության ճանապարհին» շարքի երկերի ստեղծագործական մեթոդի առանձնահատկություններն առավել որոշակի են ի հայտ գալիս, երբ ուսումնասիրում ենք դրանց գեղարվեստական պատկերային համակարգի խորքային օրինաչափությունները: Ըստ այդմ էլ՝ մեզ համար ակնհայտ է, որ այս շարքի ստեղծագործությունները գրվել են նեոռոմանտիզմի գեղագիտական համակարգին բնորոշ գեղարվեստական հղացման ու հորինման տրամաբանությամբ: Այդպիսի մտածողության տիրույթում հաճախ ռոմանտիզմի սկզբունքների հետ էկլեկտիկորեն համատեղվում են այլ գրական ուղղություններին (ռեալիզմ, նատուրալիզմ, սենտիմենտալիզմ, իմպրեսիոնիզմ, սիմվոլիզմ և այլն) հատուկ գեղարվեստական ոճի տարրեր:

Հեղինակի գերխնդիրն է եղել այս շարքի երկերում գրական բազմազան հնարանքներով վերստեղծել հայ ազատամարտի ընթացքում գիրկընդխառն դրսևորված հերոսականն ու ողբերգականը, վեհն ու ստորը, սովորականն ու արտասովոր-ֆանտաստիկականը: Նա գեղարվեստորեն մարմնավորել ու իմաստավորել է հայ մարդու և հատկապես ազատամարտիկ-հայդուկների դրամատիզմով հագեցած առօրյայի, բընության դեմ գաղափարական ու գործնական պայքարի, նրանց կամքի ու անձնազոհության՝ երբեմն բացառիկ դրսևորումներ պարունակող դրվագներով լի աշխարհը: Էականն այն է, որ արևմտահայության համար ստեղծված մղձավանջային կացության պայմաններում ազատագրական պայքարի թեման արծարծելիս գրողն ավելի ու ավելի էր հակվել դեպի թուրք և քուրդ իշխողների բռնության դեմ մարտնչելու, ուժի փառաբանման գաղափարական ելակետը: Նրա աշխարհայացքում պայքարի կենսափիլիսոփայությունն ամրապնդվել էր թե՛ Դաշնակցության տեսաբան Ք. Միքայելյանի և թե՛ գերմանացի փիլիսոփա Ֆ. Նիցշեի շնորհիվ: Առաջինը գրողի ուշադրությունը սևեռել էր ազգային խնդիրների վրա, իսկ երկրորդը՝ գերմարդու և հին արժեքների վերագնահատման մասին ունեցած իր հայացքներով՝ ուժեղ անհատի գործունեության գաղափարի վրա:

Ազգային-ազատագրական պայքարի դիպաշարում Ահարոնյանի նախընտրած հերոսը ոչ միայն պարտիզանական մարտեր մղելու համար Արևմտյան Հայաս-

տան անցած հայդուկ-ֆիդայինն է՝ ազգային կուսակցության կարգապահությանը ենթակա մարտիկը, այլև տեղի հայ ազգաբնակչության միջից դուրս եկած, առանձին խմբով կռվող, ապա նաև նրանց միացած վրիժառու հայ գյուղացին: Նա, ով արժանապատվորեն ապրելը գերադասել էր ստրուկի ու ճորտի վիճակից, ով, զենք վերցնելով ու կյանքը վտանգի ենթարկելով, հաճախ անհեռանկար ու անհույս, տարերայնորեն կռվել էր թուրք ու քուրդ արյունկզակ ոճրագործների ոհմակի դեմ:

1898-1900թթ. ընթացքում, «Դրոշակում» տպագրված այս շարքի պատմվածքներին հետագայում ավելացնելով հին ու նոր այլ ստեղծագործություններ՝ հեղինակը դրանք ամփոփում է «Ազատության ճանապարհին» ժողովածուի մեջ, որն առաջին անգամ լույս է տեսել Թիֆլիսում, 1906թ.: Ժողովածուի ստեղծումը վկայում է, թե որքան կարևոր և սրտամոտ են եղել վերոհիշյալ գործերը նրա համար: «Ազատության ճանապարհին» գտնված վերնագիրն արդեն խորհրդանշում է գրքի գլխավոր թեման և գաղափարական պաթոսը: Այստեղ զետեղված երկերը հիմնականում գրված են արձակի պատմողական-վերլուծական պատկերման սկզբունքով: Այդ պատմվածքներից են՝ «Խայը», «Պատիվը», «Էլ մի աղոթիր», «Մայրը», «Արյունոտ թթխմոր», «Ջավոն», «Աշուղը», «Կռվի դաշտում», «Տիրացու Գրիգորը», «Արյունի ձայնը», «Արտը», «Վազրիկ», «Հազրեն», «Մեր ճանապարհը», «Լուսաբացին», «Մահը», «Փոթորիկը»:

Այս երկերում իրրև գաղափարագեղագիտական ելակետ կարևորվել է դարավոր թշնամու դեմ ընդհանուր ճակատ կազմելու համար ազգային-հասարակական ուժերի համախմբման պահանջն ավելի, քան սոցիալական տարբեր խավերի միջև հակասությունների բացահայտումը: Այսպիսի մոտեցումը պայմանավորված էր արևմտահայության տվյալ պատմաշրջանի կեցության յուրահատկությամբ: Օսմանյան կայսրության տարածքում մահմեդական ցեղերի տիրապետության տակ գրեթե հավասար չափով տուժում էին (հատկապես գավառահայ ազգաբնակչության) բոլոր խավերը: Օպերատիվորեն արձագանքելով ազատագրական պայքարի հետ կապված, հայությանը հուզող օրախնդիր հարցերին՝ Ահարոնյանն հանդես էր գալիս իրրև միտումնավոր գրող: Նա բռնությունների զանազան դրսևորումներին ի տրիտուր տարփողում էր ֆիդայական-ազատագրական պայքարը: Գրողը միաժամանակ ձգտում էր գաղափարական միտումը ներդաշնակել գեղարվեստական հղացքի արտիստիկ կատարման հետ: Նշված դիտանկյուններից ուշագրավ է շարքի հենց առաջին՝ «Խայը», պատմվածքը:

Այս երկը շարքի համար ծրագրային նշանակություն ունի: Ըստ պատմվածքի գերխնդրի՝ հեղինակը անշրջելի թվացող ծանր ճակատագրին անդրադառնալի կերպով գամված լինելու լայնորեն տարածված գիտակցությանն ու տրամադրություններին հակադրում է նրա դեմ հայ մարդու անհատական կամ խմբակային խիզախությամբ ընդվզելու գաղափարը: Այս միտքը պատմվածքի պատկերային համակարգում արտածվում է գաղթական Նախոյի (Խայի) անձնական փորձից և հակադրվում նրա նոր միջավայրի՝ արևելահայ գյուղի մարդկանց պատկերացումներին: Վերջիններս ձմեռվա մի իրիկուն դատողություններ էին անում ճակատագրի մասին: «Յուրաքանչյուրն իր դիտողություններն արեց այդ մասին, ամենքն էլ հասան այն եզրակացության, որ մարդը խաղալիք է ճակատագրի քմահաճույքին, որ նրա առաջ անզոր են մարդկային բոլոր հնարքները, նրա բոլոր խելքը, եռանդը, աշխատանքը»:[1] Ճակատագրի հանդեպ նման կրավորական վերաբերմունքը և ստրկական հնազանդությունը անընդունելի էր իր հայրենիքում ֆիդայի եղած Նախոյի համար: Ճակատագրին չհավատալու մասին նրա հայտարարությունը հանկարծակիի է բերում, նույնիսկ ապշեցնում է գոմում հավաքվածներին. չէ՞ որ ճակատագրի ամենազոր ուժին չհավատացողը ամեն ինչից զրկված մի արևմտահայ գաղթական էր: Գեղարվեստորեն տպավորիչ է պատկերված պահի կարևորությունը, Նախոյի ընկատմամբ ներկաների վերաբերմունքը:«Իսկապես ամենքն էլ զայրացած էին. և ինչպե՞ս չզայրանային. Մելիքը, հարուստ, զորեղ Մելիքը հավատում էր ճակատագրին, վախենում էր նրանից. ոնս Գևոն, որի ճիպոտի առաջ բոլորը դողում էին ինչպես ուռի տերևներ, սարսափում էր ճակատագրից. տերտերը խո՝

[1] *Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. 5, Թեհրան, 1983, էջ 17: Այս հատորից մյուս մեջբերումները կատարելիս տեքստում նշել ենք միայն էջը:*

ինչ քարոզեր, վերջը ճակատագիրն էր. ամենքն էլ ընկճված էին այդ աներևույթ զորության առաջ, ամենքն էլ սոսկում էին նրանից, մեկ այս ողորմելի Խայը ճակատագրին չէր հավատում, չէր վախենում նրանից»/18/: Նախոն նման համոզման էր եկել հայրենիքում իր պես տասը ընկերների հետ ֆիդայական կռիվների բովով անցնելու շնորհիվ: Պայքարի այդ ձևն ու անվանումը քանի որ նորություն էին շատերի համար, հեղինակը հերոսի կողմից լրացուցիչ բացատրություններ է տալիս.«Քյուրդերն ու թյուրքերը մեզ ասում էին «Ֆեդայի», իսկ հայերն ասում էին «վրիժառու ոգի»»/19/: Նրանք իրենց ընտանիքների արժանապատվությունը ոտնահարելու պատճառով վրեժ էին լուծում թե՛ թուրքերից, թե՛ քրդերից, որոնք հովանավորվում էին իշխանությունների կողմից: Քննարկման առարկա հարցի կապակցությամբ Նախոն պատմում է իր ու մի քուրդ համիդիեի միջև տեղի ունեցած պատահարի մասին: Թեև անզեն՝ նրան այնուամենայնիվ հաջողվում է ճարպկություն և համարձակություն հանդես բերել և սպանել մինչև ատամները զինված հայատյաց բարբարոսին: Նախոյի մեջ դիմադրելու ուժ ու կարողություն է ներարկում ոչ միայն թշնամուն ատելու զգացումը, այլև բնության մեջ ընթացող գոյության կռվի օրինակը: Այս տեսանկյունից է իմաստավորված արագիլի և օձի մենամարտը պատկերող դրվագը, որը թեև հարմարեցված է, տակայն ունի որոշակի ուսուցողական դերակատարություն: Այստեղ իր «խորամանկության» ու «հնարամտության» շնորհիվ ի վերջո հաղթում է օձը: Հետևաբար, թշնամուն հաղթելու համար պետք է կիրառել պայքարի հնարավոր բոլոր ձևերը. չէ՞ որ մարդու կյանքը ևս գոյապայքար է: Եվ ամեն մարդ պետք է ձգտի տեր կանգնել իր ճակատագրին, գոյությունը պահպանելու համար ընդվզի իրեն խոչընդոտող անարդարությունների դեմ: «Աստված, որ չի թույլ տալիս օձի նման զզվելի սողունն անգամ անարդար զոհ դառնա արագիլին, - մտորում է Նախոն,- նույն աստվածը մի՞թե պիտի թույլ տա, որ այս քյուրդը, օձից տասն անգամ զզվելի այս արարածը իմ ճակատագիրը տնօրինի: Չէ, ճակատագիրը սխալ է, մտածեցի ես...պիտի ճար տեսնել»/23/:

Ի դեմս ժողովրդական վրիժառու Նախոյի՝ հեղինակը գտել էր իր իդեալ հերոսի հատկանիշներից ունեցող մարդուն: Նրա միջոցով է անձնավորվել տվյալ միջավայրում ճակատագրին դիմակայելու ընդունակ, ուժեղ անհատի կերպարը: Վերջինիս արարքի բարոյահոգեբանական հիմքերի մեջ անհատական կենսափորձից բացի, մեր կարծիքով, որոշակի դերակատարություն ունի նաև հեղինակի կողմից Ֆ. Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» երկի ընթերցումը, նրա գերմարդու տեսությունը: Իմաստուն օձի հետ կապված դրվագն համենայնդեպս ուղղակիորեն հիշեցնում է Զրադաշտի սիրելի կենդանուն, որի մասին վերջինս ասում է. «Երանի՜թե ավելի խելոք լինեի, շատ և շատ խելոք, որպես իմ օձը»:[2] Անշուշտ, Ահարոնյան արձակագիրը միշտ չէ որ հաշտ է եղել Նիցշեի տեսակետների հետ: Նա իր գրական ու գաղափարական-փիլիսոփայական ուսումնասիրությունը միշտ օգտագործել է իր ստեղծագործական երևակայության ու լաբորատորիայի միջով անցկացնելուց հետո, այն գեղարվեստի միջոցով ծառայեցրել ազգային-հասարակական կյանքի վրա ներգործելու համար:

Այսպիսով, գրողը ժողովրդի միջից դուրս եկած Նախո-Խայի հերոսական օրինակով ուզում էր ոգևորել հայ ընթերցողին, ազդու տպավորություն գործել կյանքի մղձավանջային պայմաններին համակերպված մարդկանց վրա: Ուստի պատմվածքում հեղինակային խոսքը ակտիվ է: Գեղարվեստական կողավորումը միտված է մարդկանց մտքերն ու տրամադրությունները վերափոխելուն: Այս առումով ուշագրավ է նաև պատմվածքի ավարտը: Նախոյի պատմածի տպավորությունն ավելի արտահայտիչ դարձնելու, ինչպես նաև հեղինակային թելադրիչ գաղափարը շեշտելու համար դրսում մոլեգնող բքի աղմուկն արդեն զուգորդվում է ընդդեմ ճակատագրի, հանուն ազատության պայքարի ոգեկոչումների հետ: Կարծում ենք՝ հեղինակային խոսքի նման «միջամտությունները» կատարված են գրական արտիստիզմով:

Այս տիպի մյուս պատմվածքներում Ահարոնյանը շարունակում է գրականացնել «ազատության ճանապարհով» գնացածների կյանքի դրվագները: Իսկ հայդուկների գործն ու պայքարը ներկայացնում է թե՛ «դրսից»՝ արևմտահայ բնակչության վերա-

---

[2] *Ֆրիդրիխ Նիցշե, Այսպես խոսեց Զրադաշտը, (գերմաներենից թարգմ. Վ. Խորենի, Բաքու, 1914), Եր., 1990, էջ 24:*

բերմունքի բարդույթներով, թե՛ «ներսից»՝ հայդուկային խմբերի մեջ ընդգրկվածների անձնուրաց, խիզախ արարքների, գերմարդկային տանջանքների, ինքնաբուխ մարդասիրության դրսևորումներով:

ХУДОЖЕСТВЕННОЕ ВОСПРОИЗВЕДЕНИЕ НАЦИОНАЛЬНО- ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ В ПРОЗЕ А. АГАРОНЯНА (рассказ „Хай„)

Резюме *Г. Хачикян*

Освободительная борьба западных армян в художественной прозе А. Агароняна целеустремленно отобразилась особенно в цикле „На дороге свободы„, затем в произведениях одноименного сборника. Философия освободительной борьбы закрепилась в сознании писателя под влиянием некоторых идей основоположника и теоретика партии Дашнакцутюн Х. Микаеляна, а также немецкого философа Ф. Ницше. Для раскрытия идейно -философских принципов сборника програмное значение имеет рассказ „Хай„. В данном произведении, написанном в духе художественного мышления неоромантизма, писатель развивает и обосновывает идею бунтарства против кажущегося непоколебимого рока.